

Այս նշանաւոր ձեռագիրը Լամբրոնի բերդին տիրող՝ Հեթում (կրօնաւորութեան աւետարձ) Հիդի) իշխանաց իշխանին († 1212 — 1218 տարիներու մէջ) սերունդը մանրամասն յառաջ կը բերէ, ծանօթացընելով այնպիսի անձնաւորութիւններ ու պարագաներ, որ բազմաճմուռ Վ. Հ. Ալիշանին «Սիսուան»-ին մէջ կը պակսին, կամ ծանօթներու անստղծները կ'ուղղեն: Յիշատակարանիս համեմատ՝ Հեթում-Հեդիի կնոջն անունն է Սրեֆօն կամ Սրեֆօնի (անծանօթ) ասոց թոռն՝ Աւշին արդէն 1274ին («Սիսուան», էջ 85 կը գնէ «անգամին ի 1277 ամէ») մարտնչաւոր էր, իւր Տիկինն էր Ալոյ («այսպէս կարգալու է բնագրին «Չորիկիննակաց»): Աւշինի եղբայրն էր Հեթում քաղցրաբարոյ «արեամբ նահատակաւ Վերայ ճշմարիտ հաւտիցս (Բերեւ)՝ հաւատոցս» Բրիստոսի, որ արդէն իսկ 1274ին («Սիսուան», էջ 85 «ոչ յիշի կատարածն») պատերազմի մը մէջ նահատակուած կ'երեւայ: Աւշինի որդիքն են՝ 1. Մեծ իշխանաց իշխան Կոստանդին (անծանօթ): 2. Մեծ իշխան Հեթում՝ որ 1274ին «դեռաբայս պատանեակ» է, յետոյ մարտնչաւոր Հայոց («Սիսուան», էջ 85՝ † 1307): Եւ 3. Դուռարն Թեֆն կամ Թեֆնու (անծանօթ): Աւշինի քոյրերն են՝ 1. Կեռն, որուն որդիքն են՝ ա. Թագադիր Հայոց Կոստանդին, ք. Աւշին եւ Գ. Սրբադ. (չորսն ալ անծանօթ): 2. Ընկաւորութիւն, որուն որդին է Լեւն (անծանօթ): Ասկէ կրնայ տեսնուիլ՝ որ ինչպիսի կարեւոր է հայերէն հին ձեռագիրներու ցուցակներու հրատարակութեամբ: այսպիսի յիշատակարաններ հրապարակ հանելը:

ԽՄԲ.



ՎԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՆԱԲԵՏԱՐԻՆԿԱՆ ՎՍԵՄ. ԳՐԱՐԻՆԵԼԻ ԷՓԵՆՏԻ

Սան ապարէն կեանքեր, որ հանրօգուտ հեղինակութեանց տրպարներ են:

Այսգունակ ընդօրինակելի կեանքերու յուշահատոր մ'ալ կ'արժէ նաեւ Վսեմ. Գաբրիէլ Էփ, Նորատունկեանի կենսագիրը, որ իւր մէն մի ուղղութեամբ, իւր համայն նշանակութեամբ, ընթերցման եւ ուղագրութեան արժանի է:

Պաշտօնական ու անպաշտօն հմուտեանց նախանձանդներ եւ հետաքրքիր բոլոր անձանց փափաքն գոհացուցած է Օսմանեան մամուլին փայլուն ներկայացուցիչներէն՝ «Սերվէթի» Ֆիւնուն, անուն պատկերազարդ հանդեսը, իւր 332^{րդ} թուոյն մէջ հրատարակելով Նորատունկեան Գաբրիէլ Էփէնտիի լուսանկարն՝ հանդերձ Օսմանեան մամուլին պարտ ու պատկան եղած խմագրական ընդարձակ կենսագրոյն, որ քաղած է Բ. Դրան պաշտօնէութեան կենսագրական ճիւղի գիւտնէն:

Մենք եւս՝ հայկական մամուլին աշխատողներէն մին, զգածուելով ու ներշնչուելով «Սերվէթի» Ֆիւնունին՝ հրատարակած պատուաբեր կենսագրականն եւ գնահատել քաղցրութեան, պատեհ առիթ կը համարիք հայ մամուլին մէջ եւս պատկերել իրեն ամենուս ծանօթ հանրային կեանքը:

* * *

Յոհաննէս հանրածանօթ գերգաստանի մ'անգամ եւ ուսումնասէր հօր մը՝ Էփմէքճի-պաշի հանգուցեալ Գրիգոր Էփ. Նորատունկեանի որդին է Գաբրիէլ Էփէնտի, որ ծնած է յուսկիւտար 1852 Նոյեմբեր ամսոյն մէջ:

Ի տղայ տիղջ անտի, մեծ ապագայի մը կոչման սահմանուած լինելն արդէն անխերէ էր, շնորհիւ կանխաթիթի իմացական ձիւղերուն, որոց վկայ եւ խոստովանող էին Նորին Վսեմութեան ծանօթք եւ անոր դաստիարակութեան ուսուցիչք:

Սկզբնական կրթութիւնը՝ նախ իւր տանը մէջ, եւ ապա Գաւաղի զաղղիացի Ֆրերներու դպրոցը ստացած է, աշակերտելով 1865 — 1869 թուականը:

Հայերէնի մասին՝ իւր գլխաւոր դասատուն եղած է հայկաբան եւ խաղաղէտ պ. Անդրէաս Ֆափաղեան:

17 տարեկան էր, որը դպրոցական սոյն շրջանը կատարեց, եւ սուղ ինչ ժամանակ առեւտրական ասպարէզը մտաւ, ուր 1870, Օգոստոս ամսոյն իւր բարիքիշատակ հօրը մահունէն վերելք Էրած է վաճառականական աշխարհը, եւ Բ. Դուռը Արտաքին գործոց պաշտօնատունն ընդունուած, որոյ գիւտական արձանագրութեանց սենեկին իբր օժանդակ պաշտօնեայ, եւ չորս ամիս յետոյ՝ Արտաքին Թիղթակցութեանց սենեկի անդամ եղած է:

Որմէ ետեւ՝ իւր ուսումը կատարելագործելու համար ի Բարիզ ուղեւորած, եւ 1870էն մինչեւ 1875ի վերջերը, իւր վեց տարի՝ ուսանողական բարձրագոյն դասընթացք մը բոլորած է։ Նախապէս լատիներէնի, փիլիսոփայական եւ այլ ուսմանց համար՝ «Սորպոն» ի եւ «Գոլէֆ» ար ֆրանսի դասերուն հետեւած, եւ ապա մնած է նոյն մայրաքաղաքին իրաւաբանական վարժարանն, ուր հետզհետէ փայլուն քննութիւններ անցրելով, վկայագիրն ստացած, եւ քաղաքագիտական ուսմանց համար՝ «Էֆֆ» ար սեանս բոլիւթիք» վարժարանն աշակերտած է։

Իւր ուսանողութեան այս աւարտական շրջանին մէջ, այսինքն, 1873 Սեպտ. 3էն սկսեալ, Բարիզի Օսմանեան դեպպանատան պատուակալկցորդ անուանուած է։

Եւ 1875 Պեկտեմբեր ամսոյն մէջ, հաղիւ 24 տարեկան հասակը թեւակոխած, վերագրածաւ. Վ. Պոլիս, Օսմանեան դեպպան Վի փաշային հետ։ Իւր իմացականութիւնն արդէն ուռճացած եւ բեղլնաւորուած, ուսմամբ ու գիտութեամբ ահաջնուն՝ կազմ եւ պատրաստ էր ընդգրկելու այն դիւանագիտական յոսանձիծաղ ասպարեզն, յորում իւր պայծառ ապագայն պիտի հանդերձուէր։



ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ ՎՍԵՄ. ԳԱՐՈՐԻԶԼ ԷՓԵՆՏԻ

Սյլ եւս Գարրիէլ Էֆենտի անվճեկի արժանիքն եւ կարողութիւնը կը սկսէր ճանչցուիլ ու արժանանալ բարձրագոյն գնահատութեան, երբ Արտաքին գործոց նախկին նախարար՝ Բաշան փաշան, իւր պաշտօնատան իրաւագիտական գործոց կարգադրութիւնը լաւ եւս արգիւնաւորելու համար, մասնաւոր դիւան մը հաստատելով, նոյն նորակազմ պաշտօնէութեան քարտուղար ընտրեց զԳարրիէլ Էֆենտի, ուր եօթն ամիս պաշտօնավարելէ ետեւ, Արտաքին թղթականութեանց սենեկին առաջնակարգ խըմբագիր կարգեցաւ, եւ արժանացաւ Վիլիթի թեմայի վերկորդ կարգի պատուաստիւ քանին։

1878 Հոկտեմբերէ մինչ յ1881 Մարտ, կենանք թուել հետեւեալ պաշտօններ, որոց մէջ Նորին Վսեմութիւնը՝ փայլեցուց իւր սեպհական բազմաձիրտաւանդն, արժանանալով

նոյն իսկ օտար կառավարութեանց գնահատմանց։

Այս եռամեայ շրջանին մէջ վարեց.

Ա. Սերպիւր Սահմանագծութեան միջադգային Եւրոպական Յանձնաժողովոյն Առաջին Բարաուդարութիւնը.

Բ. Արապ-Բապիայի ինդլոյ մասին Սիլիսթերի մէջ կազմաւ Եւրոպական խառն Յանձնաժողովոյն Երկրորդ պատուիրակութիւնը.

Գ. Անատոլիոս Սահմանագծութեան միջադգային Յանձնաժողովոյ անդամակցութիւնը.

1881 Մայիս 9ին շէթիներ Օսմ. դեսպանատան Առաջին ֆարտուղար, եւ 1883 Ապրիլին ալ, բարձրագոյն դրան օրէնսգետ-խորհրդական անուանեցաւ: Պաշտօն մը, զոր կը վարէ ցարգ ամենայն արժանաւորութեամբ:

Գարբիէլ Էֆէնտի անըզհատ, անյող-դողգ ու անխոնջ աշխատողի համբաւ մը կը վայելէ իրաւամբ, ոչ թէ իրեն յանձնուած պաշտօններն անվերի կատարելուն համար միայն, այլ եւ ամէն յարուցեալ ինքրորդ յաւակից պարագաներն ալ քաջ ուսումնասիրելով, պատուաւոր ու արգիւնաւոր եղբակցութեանց յանգեցնելուն համար:

Այս եղած է գաղտնիքն այն առաւելութեանց, որ միշտ զինքն փնտռել եւ իրենց հանրաշ ու քաղաքակրթիչ գործունեութեանց մասնակից ընելն՝ անհրաժեշտ դատած են ազգային թէ միջազգային պաշտօնաւորներ:

Օրէնսգետ - խորհրդականի պաշտօնն ստանձնելով՝ կ'ունենար շատ փափուկ եւ ծանր աշխատութիւն մը, ամանաւոր երբ մոտենալ թէ այս առիթն իրեն առջեւ կը բանար, իւր նմանեաց համար նոր ու առաջնաւոր սքնութեանց եւ յոյժ փշալից ու կնճռոտ ուսումնասիրութեանց նոր ասպարէզներ:

Գաղափարութեանց վերաբերեալ խնդիրները՝ պարզ ունին մանրակոյղ եւ շրջահայեաց ընտելեան, ինչպէս եւ պետական պայմանադրութեանց պատրաստութիւններն՝ արտակարգ հանձարի պէտքը:

Իւր յարողութեանց ճարտարախօս ապացոյցներն եղած են ըստաբին գործոց նախարարութեան, Արդարութեան գործոց նախարարութեան, Ելեւմտական եւ Հանքային շինուածոց պաշտօնատանց մէջ կազմուած գրեթէ բոլոր կարեւոր Յանձնաժողովներու անգամակցութիւնները, ինչպէս որ ցարգ կը շարունակէ Եպարքոտարանի եւ Պետական խորհրդի նախագահութեան պաշտօնատանց մէջ գտնուած զանազան Յանձնաժողովներու մասնակցութիւնը:

Պաշտօնական սոյն շրջանակաց մէջ վարած գործունեութիւնները՝ արժանացուցած են զինքը հետզհետեւ նախ, 1884 Ապրիլ 5ին, Իւլայի երկրորդ կարգին. 1888 Մայիս 8ին, Իւլայի Առաջին կարգին. եւ, 1894 Օգոստոս 2ին՝ Պալայի բարձր աստիճանին:

Ո՛վ չի յիշեր Ռուսիայի երկաթուղեաց անվերջանալի ու հաշուական կնճռոտ խնդիրն ու դատերը՝ Գերմանիոյ վաճառականական, Սերպիոյ երկաթուղեաց միացման, Պարսկաստանի

թղթատարական եւ այլ կարգ մը գաղնադրութիւններ, որոց համար պաշտօնական փոխանորդն կամ Օսմ. պատուիրակն եղած է Գալբիէլ Էֆ. Նոյնպէս ասիական երկաթուղեաց սակերու (Թարիֆա) բարեփոխման եւ միացման, Օսմ. պետութեան վիճակագրական դիւանի եւ այլ նմանօրինակ խնդրոց գործակցութիւնն, Առողջապահական խառն սակցոյցներու, եւ Կ. Պոլսոյ քաղաքիանց գործերը քննելու համար կազմեալ միջազգային Յանձնաժողովներու նախագահութեան պաշտօնները, զորս վարած է ամենայն արժանաւորութեամբ:

* * *

Ինչպէս ակնարկեցինք, Գարբիէլ Էֆ. յիշատակելի առիթներ ունեցած է, իւր պաշտօնական այլեւայլ գրից եւ դիւանագիտական դերերու բերմամբ, ի յայտ անելու՝ իւր աշխարհավարական տաղանդը, զոր բաց ի Օսմանեան Պետութենէն, — որ պատուած է զինքը Ա. կարգի Մէճիսիէի եւ Բ. կարգի Օսմանիէի շքանշաններով —, պատուած են նաեւ օտարազգի պետութիւնք այլեւայլ պատուանշաններով: Ինչպէս, Պարսից Շահը՝ Ա. կարգի Հիւր-ու-Խոտրէիտ ընծայելով. Սերպիոյ Թագաւորը՝ Ա. կարգի Ռազզովիով. Ռուսիոյ Շարը՝ Ա. կարգի Սիմեոնով. Իտալիոյ Թագաւորը՝ Կոստա Օֆիսիա կարգին՝ Գուստո Կալիօնով. Ֆրանսայի հանապետութիւնը՝ պաշտօնատարի կարգին Լէօթան Կոնտորով. Ապանիոյ պետութիւնը՝ Բ. կարգին Խոպպելա գաթովիով. Սեւ լեռան իշխանը՝ Նոյն կարգէն Ցանիլիէ Նշանով. Հելլադայի Վասիլէսը՝ Նոյն կարգին Ս. Փրկիչ պատուանշանով. Ռուսմանիա՝ իւր Գուստո սէ Ռուսմանիա անուն նշանով. եւ դարձեալ, Սուլթանաց սուլթանը՝ Յունական պատերազմի եւ Արեւելի շքադրամներով:

Եւրոպական աշխարհի մէջ իւր այս գիտական եւ իրաւաբանական կարողութիւնները ճանչցուած լինելով, զինքը Ֆրանսական եւ գերմանական քանի մի իրաւագիտական կաճառաց անգամ ընտրած են:

Այս ծանուցեալ կարողութեանը համար չէր, որ Նորին Վսեմութիւնը՝ Ժամանակ մ'ալ Կ. Պոլսոյ իրաւաբանական վարժարանին մէջ քաղաքագիտութեան եւ միջազգային իրաւանց դասերը կ'աւանդէր:

Գրեւ անցեալ տարի հրատարակեց ի Բալիզ այն գեղատպ «Հաւաքածոյ Օսմանեան

դաշնագրութեանց, անուն Ֆրանսերեն երկա-
սիրութեան Ա. Հատորը, Օսմանեան պետու-
թեան դաշնագրութիւններն ու յանձնառագի-
րները կը պարունակէ, եւ որոյ յառաջաբանն
կը հասկցուի սոյն աշխատասիրութեան ընդար-
ձակ ծաւալն եւ ունենալը կարեւորութիւնը:

* * *

Յարդ Վսեմ. Գարբիէլ Էֆ. Նորատուն-
կեանի միջազգային դիւանագիտական կենսաբ
ներկայացուցիւք:

Տեսնենք նաեւ զինքն ազգային պաշտո-
նական շրջանակաց մէջ:

Պատանեկութենէն ի վեր, միշտ ջերմ-
եռանդ նախանշալոյց եղած է ազգային կրթա-
կան ինդերշոյն:

Եղած է նախ Հողաբարձու՝ իբր երկու
տարի Գառաբիւլի Սրամեան երկսեռ վարժա-
րանի, Քեւ ապա Իսկիւտարի միացեալ թաղից
վարժարանաց, երբ Հանգ. Իփէքճեան Համ-
բարձում Էֆ. կը վարէր ընդհանուր տեսական
պաշառը, եւ հուսկ յետոյ՝ Բերայի Ազգ. վար-
ժարանաց: Քանի՞ քանի անգամներ Ատենապե-
տութեան պաշտօններ վարած է ազգային զա-
նազան մարմինոյ:

Ատենապետ՝ իւր ծննդավայր Իսկիւտարի
Սէլամիլէի Թաղ. Խորհրդոյ. Արարատեան
ընկերութեան ընդհանուր ժողովոյն. Ազգ. վար-
չութեան Տնտեսական Խորհրդոյն, որ իբր տիպար
իր նախորդաց եւ միանգամայն իր յաջորդաց,
Հրատարակած է իր պաշտօնավարութեան ման-
րաման Համարատուութիւնը: Իսկիւտարի Հայ
եւ Յունական գերեզմանատան սահմանագծու-
թեան խառն Մասնաժողովոյ. Սանասարեան
վարժարանի ինամակալութեան, Իզմիրեանց
կտակի միայուն յանձնաժողովոյ: Պատուակալ-
Անգամ 1881ի սոփելոց Յանձնաժողովոյն:

Բ. Ատենապետ՝ 1885ի Ազգ. կեդրոն.
վարչութեան, եւ անգամ արդի պատկ. Քաղ.
ժողովոյ: Եւ այս կրկին շրջաններու մէջ ալ,
որքան որ այլ իր անդամակիցներէն տարեօր
կրտսերագոյն եղած է, այսու ամենայնիւ Ազ-
գային ժողովոյ անգամոց քուէներու մեծամաս-
նութիւնն ամենէն աւելի ինքը շահած է:

1894ին, քուէից բացարձակ առաւելու-
թեամբ, Ազգային ժողովոյ Օսմանական ըն-
տրութեան, եւ այս առթիւ յաւթերթերն հրա-
տարակեցին թէ՛ “Ազգ. ժողովոյն Ատենապետ
ընտրուած Գարբիէլ Էֆէնտի Նորատունկեան
մեր պաշտօնական դասակարգին մէջ ամենէն

Համալրելի դէմքն է՝ իւր անժխտելի տաղան-
դով, իւր ուղիղ զգացումներով, իւր համա-
տութեամբ, եւ ազգային շրջանակի մէջ արդէն
ունեցած իւր օգտակար պաշտօնավարութեամբ:
Այսպիսի պատիւ մ'ընելով Գարբիէլ Էֆէնտի,
ապահով ենք թէ ժողովականք՝ իրենք զիրենք
պատուեցին, եւ ցոյց տուին թէ ինչպիսի ուղղու-
թեամբ կ'առավարուած կը փափաքին տեսնել
այս ժողովը:”

Եւ մինչեւ այսօր ալ կայ Ազգին ամէն
դասակարգերուն մէջ զգած ու պատուաւոր
մեծամասնութիւն մը, որ կատարեալ համար-
մամբ ու անկեղծ վստահութեամբ կը պատուէ
ու կը սիրէ զինքը տեսնել Ազգ. վարչութեան մէջ:

* * *

Նորին վսեմութիւնը՝ բարեգործական
հաստատութեանց եւ կրթանաւալ ընկերու-
թեանց համար տրուած պարահանդեսներուն ու
նուագերգութեանց կարգադիր Մասնաժողովոյ
առաջնակարգ արդիւնաբեր արակցութիւն ըն-
ծայած է:

Ի նպաստ աշաղուրկ Ղեօզիւրեան Թաղէոս
պատուելի պարտոց վճարման, Իսկիւտարի իւր
պաշտպանութեանը տակ լարարանի մը հասցեով՝
այդ պարտքն անմիջապէս հատուցանել տուած է:

“Մասիս, լրագրոյն արագատիպ մեքենայ
առնուելու մտք եղած խմբագրական հրապա-
րակային հրաւերին, առաջին անգամ ինքը պա-
տասխանած է նպաստի կարեւոր գումար մը
ղրկելով՝ իբր քաջալերութիւն վաստակաւոր
խմբագրապետին:

Հատ մ'աղքատիկ ուսանողաց՝ պաշտպա-
նութիւն ընձեռած է նիւթապէս եւ բարոյապէս:

Նաեւ Գեղարուեստից սիրահար է: Իւր
ընկալարանին ընդունելութեան սրահը՝ ընտրե-
լագոյն եւ կիրթ ճաշակի հաւաքածոյ մը կը
ներկայացընէ զանազան գեղեցիկ նկարներու ու
նրբահիւս ձեռագործներու նկատմամբ:

Ունի ձօն եւ բազմաշեղանկ Մատենա-
դարան մը, որ գլխաւորապէս օսմանեան եւ
հայ մատենագիտութեան բոլոր տեսակներն,
հին եւ նոր տպագրութիւններն՝ յատուկ ինամօր
դասաւորուած են: Գրած է իւր ուղեւորական
տպաւորութիւններն, որոց նմոյշ՝ կողմաստեան
ուղեւորութեան վրայ, երբեմն հրատարա-
կուած է “Փունջ, շաբաթաթերթի մէջ:

Գարբիէլ Էֆ. ոչ միայն լու գրող մը,
քաջ խմաստաւոր մը, ու տրամաբան քննադատ
մ'է, այլ եւ ճարտար աստեղագիտ մը:

Թողունք Ազգային Ժողովոց մէջ զանազան խնդրոց վրայ ըրած ատենաբանութիւններն, որք հաճութեամբ լսուած են, այլ յիշեցնելու ուղղակի ժողովրդեան սրտին հետ խօսած՝ այն ուղեւորական տպաւորութիւններն, զորս Ս. Խաչէ վարժարանին կից՝ լսարանին մէջ ունեցրելու բախտն ունեցած է ընտրելագոյն խուռն բազմութեան հետ, սոյն տողերն ծրարողը:

Կ. Պոլիս

Ա. Յ. ԱՅՂԱՅԵԱՆ



Ի Ն Զ Ո Ւ Ր Ա Ն Ա Վ Ա Ն

ԱՐԳԻ ԼՆՃԱՐԱՄԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ըրարականութիւն)

Լեզուակազմութեան երրորդ ծելը:

Հարկաւորութիւն, կամ հարկաւոր լեզուներ:

3. Հայերէն լեզուականութիւնը: «Լեզուականութիւնը լեզուական իրաւունք տայ լեզուազէտ ընթերցողին յուսալու, որնորանոր լեզուներու՝ որոնք ի մի խմբուած են հայ գրչին տակ, ընթացքը պիտի պարզուի այս հաստատմին տակ: Բայց չէ՛: Բայց ի հայերէնէ՛ն՝ ուրիշ լեզու առ այժմ չենք ճանչնար այս խմբին տակ: Եւսին իսկ հայերէնն հազիւ վերջէ ժամանակներս կրցաւ հնգերկուցական շղթային մէջ զգույն մը դրաւել՝ իբր իրեն սեպհականութիւն: Դ՛ի՛ Լազարէի եւ Գր. Միւլլերի յազուածներով ու գրքերով գրեթէ հաստատուած եր հայերէնի երանեան լեզուանքին իրաւորելը: Թէպէտ Լաստէն՝ ապացուցանել կը շանար որ՝ առանձինն հայերէն — փոքրամասնական — իրաւունք չէ՛, բայց զուցուցները զօրաւոր չէին, եւ երկրորդ՝ իրմէ ալ յառաջ Պէտերմանի, Վինգիլմանի, Սպիգելի, եւսոյն յազուածներով գրեթէ ապացուցուած կը համարուէր հայերէնի երանեան լեզու ըլլալը: Զարմանք չէր, որովհետեւ

հայերէնի վրայ տեսնուած երանեանները քիչ շատ որոշ եւ ապահով էին. բայց հարկ էր միտ դրուել, թէ քանի որ այս ամէն նշանները հայերէնի իւրաքանչիւր բառին վրայ չեն նշմարուիր, եւ երկրորդ. յառաջ՝ բերուած օրինակները քանի որ իրական նշաններ ունին փոխառութիւնըլլալու, կրնանային գիտնուիլ ըլլալ... Պրոֆ. Հիւրշմանի վեհապահեալ էր այս մեծ գիւտը, որ իւր մէկ յօդուածով՝, բարորդին շոր հարկին բացառ հայերէնի համեմատական լեզուագիտութեան, եւ քրիստոնէականներն այս ազդուութեամբ շարունակուեցան, իւր վերջին հրատարակութեան մէջ՝ ամփոփեց իւր քննութեանց արդիւնքը, զտեսով ընդի հայերէն բառերը փոխառելներն (պարսկ. ասորերէն, յունարէն եւ անասոյց ծագում ունեցող փոխառութիւններէն), սկսաւ ընդի հայերէն բառերու վրայ խաղարկել հայնական ու ձեւախօսական օրէնքները: Mutatis mutandis՝ դրուած է հաստատուեցիմ մը հայերէնի ձայնախօսական ու բառական քննութեանց, սակայն պէտք չէ մոռնալ որ այս քննութիւնները կը դառնան միայն եւ միայն Ե. դարէն սկսեալ մեզի հասած գաւառ հայերէնի վրայ: Գաւառական բարբառներու հետազոտութիւնն ալ — քանի ջարդ — մինչեւ Ե. դար կրնան հասցընել զմեզ, բայց ոչ աւելի յառաջ:

Ուրեմն հայերէնը կը ճանչնանք Ե. դարէն, բայց անկէ յառաջ ինչ կը խօսենք հայերը. բնական է հայերէն մը, բայց ինչպիսի հայերէն, չենք գիտեր: Ուրաքուրուներու, Աւերի կամ Տոպանեան օրախօսութիւնները մեզի ծանօթ հայերէն օրէնքներով կարգաւ ու մեկնել ի զուր այնատուութիւն է, եւ ոչ ենթադրութեանց սահմանները կը ճանչնանք: Մինչեւ հիմա կարգադրուածներու մէջ հայերէն Բառ չէ անգամ չկցանք գտնուի, ի բաց առեալ լեզուական խոր կամ Բառ բառը, որ սակայն հայերէն բառի ձեւն ու նկարագիր չունի, հայերէնն ասով ալ վերնականապէս քննուած չէ, գիտ կան շատ մը տարօրինակ բառեր, որոնք փոխառեալ կամ բնիկ ըլլալու վիճին կը պայտան, բայց այժմէն կարելի չէ որոշ խօսք մ'ըսել, ունինք որ. աղաղակաւ որեւէ, որեւէ (հինգրաւ. raoza, նպ. yōza, բայց

1 Zeitsch. der deutsch. Morgenl. Gesellsch. 1896
Հատ. 10, 364—388:

2 Գերթականութիւն հայերէն լեզուի, 1837:

3 Հայերէնի հիմունքն՝ արեւելեան լեզուագիտին մէջ,
1846:

4 Հուգոմարէ լեզուի քերականութիւն, 1856:

5 Ժամանակակից լեզուագիտաց մէջ ընկալեալ շնմարտութիւն էր այս. Ժան Դե Երանեան լեզուի յատկանշան (Recherches sur la formation d. l. langue arménienne եւսոյն, Պարիս, 1871 (հրատ. E. Delaurier) էջ 11) կը համարուէր երանեան լեզուի մը յատկանշանքն՝ առնելով Boppén (Vergl. Gram. d. Sanskrit, Zend, Armenisch, եւսոյն, Բերլին, 1857—1861.) ու իր որ ստեղծելուց Ե ունի, հայերէնը միտ եւրոպական լեզուաց պէս, ունի h — չ (!) ա — միտ — սանիս. māsa(-) ակ. māhyā նպ. māb, հայ. միտ — սանիս. mānāsa — միսն, եւսոյն, Բ) Սանիկրտի մէջ ԵՄՈՒ, լատ. ի մէջ ԵՈՒ, զանգ. ի մէջ

զՈՒ եւ պարսիկ չՈՒՍ՝ սկսած բառերը, հայերէնի մէջ ալ նոյնպէս ք սկզբնատու ունի, Բ) Երանեան լեզուաց պէս՝ հայերէն չ գրին՝ կը համարուէր սանիս. Ե, իսկ եւրոպական խմբին մէջ Ե, չ, Դ) Ս գրին կը համարուէր սանիս երանեան խմբին եւ սանիս. ի մէջ՝ նոյնպէս Ե, իսկ յունարէն եւ լատիններէն մէջ՝ x, c, Ե) Սանիկ. ԵՄՈՒՍ՝ ունինք հայերէնի ինչպէս նաեւ զանգերէնի մէջ, Գր. եւսոյն:

6 Ueber die Stellung des Armenischen im Kreise der indog. Sprachen, Kuhn's Zeitschr. Հատ. 23, էջ 5—42 (1875):

7 Arm. Gram. I Arm. Etymologie, 575 էջ, Լապոցի, եւսոյն:

8 Այս քերականութեան վրայ տես մեր երկու քննադատութիւններն ի «Հանգ. Սանիկրտ» 1896 Երանեան, էջ 182—184, եւ 1897 Օգոստ. 243—249.

9 Զոր Պատմ մեկնել կը ընտրուի մեզ. alarch բառով, իսկ Jensen (Recueil XVIII. N. S. II, էջ 117)՝ որ գրով արագիկ զուէն մը նշմարելով իրականապէս պատկերագրելու